


Հայաստականի Հանքարքեան Առաջական Երթուղարք  
Ընկերութեան № 19

ԱՕՖԻԱ ԳԱԼԱԶԵԱՆ

# ԱՅՊԵՊԱՆԻ ՄՈՏ

(ԶՐՈՅՑ ԳՈՐՏԵՐԻ ԵՒ ՕԶԵՐԻ ՄԱՍԻՆ)



087.1  
9-16

Թիֆլիս  
Տպարան Ա. Ազամեևի, Փող. 7.

1914

16069

20170-05

100-

Հայաստական Հանրապետության  
Քննչառքաբան № 19

ՍՈԳԻԱ ԳԱԼԱԶԵԱՆ

087.1

9-16

48.

# ԱՅԳԵՊԱՆԻ ՄՕՏ

ՀՀ- Ի. Ը.

6885

(ԶՐՈՅՑ ԳՈՐՏԵՐԻ ԵՒ ՕՁԵՐԻ ՄԱՍԻՆ)

Յաւելած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

0000000000



Թիֆլիս  
Տպարան Խ. Աղանեսի, Պոլից. 7.  
1914

12.03.2013

Եւ այս բոլորը իրականութիւն է:

Եւ այս բոլորը իրականութիւն է:  
Գարնանային առաւօտ էր:

Ապրիլեան արել սփռել էր իր փայլուն ճառագայթները ամեն կողմ և լցրել օդը անուշ ջերմութեամբ:

Փոքրիկ Սիլվիկը գեռ չէր արթնացել, բայց  
արեի չարաձճի տաք ճառագայթները՝ ընկնելով  
պատուհանից մահճակալի վրա, զօռով բացեցին  
նրա աչքերը: Նայեց Սիլվիկը իր խոշոր սև աչ-  
քերով պայծառ արեին, նայեց կապուտակ եր-  
կրնքին ու նրա դէմքը փայլեց ուրախ ժպիտով:  
Նա յիշեց, որ օրը կիրակի է և Տիգրանը խոս-  
տացել է իրեն հետ այսօր այգի գնալու: Նրանք  
իրենց ծաղիկների համար պարարտ հող սղիտի  
խնդրէին այգեպանից:

«Իսկ այգում այնքան մանուշակ և գեղին  
ծաղիկ կը լինի այժմ», — մտածեց Սիլվիկը, —  
«որ ուղիները երեկ երկու կողմից կապտին ու  
գեղին են տալիս: Նա իր փոքրիկ կողովով թարմ  
խոտ կը բերի մանուշակներով զարդարւած. այ

թէ լաւ նախաճաշիկ կունենայ այսօր իր սպիտակ ճագարիկը»:

Այդ մտքից Սիլվիկի դէմքը աւելի փայլեց ուրախութիւնից:

«Հապա փոքրիկ շերեփուկները, որ վըխտում են գետի եզրի լճակներում», — միտը բերեց նա. — «Հա, հա, հա...» — չը կարողացաւ պահել ծիծառը Սիլվիկը: — «Ի՞նչ լաւերն են իրենց հաստ գլուխներով ու բարակ պոչերով. — իսկական շերեփուկներ են:

Սիլվիկը առաջ նրանց ձկներ էր կարծել, բայց Տիգրանը, որ սովորել էր դպրոցում, բացատրեց և ասաց, որ դրանք փոքրիկ գորտուկներ են, որ շուտով կը բումնեն նրանց ոտքերը, պոչը կը կարճանայ և նրանք կը դառնան իսկական գորտեր:

«Պէտք է այսօր նրանց էլ այցելեմ», մտածեց Սիլվիկը, ցատկեց արագ աեղից ու ծափ տալով վազեց դէպի Տիգրանի մահճակալը: Բայց մահճակալը արդէն դատարկ էր: Սիլվիկը տիրեց, նստեց անկողնուռ վրա ու մերկ ծնկերը գրկելով սկսեց մտածել թէ ինչ անի մինչև Տիգրանի վերադառնալը: Յետոյ ծոյլ ծոյլ մօտ քաշեց շորերը և սկսեց հագնւել:

Դեռ նոր էր քաշել գուլպաները, որ ներս վազեց Տիգրանը երկու դատարկ ծաղկաման ձեռքին:

— Շնորհած, շուտա, Սիլվիա. մայրիկն ասաց,

որ մինչև արեի կէծանալը գնանք, թէ չէ շոգին օձերը դուրս կը գան և մենակ այգի գնալը վըտանգաւոր է, — ասաց նա և դուրս վազեց կրկին սենեակից:

Սիլվիկը շատ էր լսել եղբօրից օձերի պատմութիւններ, բայց դեռ ոչ մի օձ չէր տեսել:

— Ի՞նչ լաւ կը լինի, որ մի օձ տեսնենք, — մտածեց նա և արագացրեց հագնւիլը:

Մինչև քրոջ հագնւելը Տիգրանը վազեց թէյ խմելու: Սա մի տասներկու տարեկան աշխուժ, կրակոտ և շատ ընդունակ տղայ էր: Այդ տարի պիտի վերջացնէր իրենց գիւղի ծխական դըպոցը:

Դասերից յետոյ ծառ ու ծաղիկ տնկելը, զանազան կենդանիների, թռչունների խնամելը, միջատներ ժողովելը և նկարելը կազմում էին Տիգրանի սիրելի զբաղմունքը:

Փոքրիկ Սիլվիկը այդ զբաղմունքների մէջ Տիգրանի անբաժան ընկերուհին էր:

Շուտով ննջարանից դուրս վազեց Սիլվիկը մի կողով ձեռին: Իր բաժին կաթը երկու ումագ արաւ և մի կտոր հաց գնելով կողովի մէջ, Տիգրանի հետ գուրս գնաց տնից: Տիգրանը տանում էր դատարկ ծաղկամանները:

Դուրսը լաւ էր. բնութիւնը արթնացել էր ձմռան խոր քնից և շատապել իրեն կարգի բերել՝ գետինը ծածկւել էր կանաչ թաւիշով, ծառերը արձակել իրենց բողբոջները, սար ու ձոր կա-

նաչել էր. օդը թնդում էր թռչունների ծլվլոցից. հեռում լսում էր գետակի ուրախ խոսքը և այգեպանների հնչուն երգը:

Կէս ժամից երեխանները ուրախ ուրախ զըրոյց անելով հասան իրենց այգու հենց չափարիտակից հոսող գետակին: Մի երկու շաբաթ առաջ վարարած գետը արդէն փոքրացել էր, բայց ափին լճացած ջրերի մէջ վիտում էին անթիւ շերեփուկներ:

Սիլվիկը մօտ վագեց լճերից մէկին, կողովը ցած դրեց ու նստելով գետնին, սկսեց հետը վերցրած հացը փշրել շերեփուկներին: Փշրանքը ընկած տեղը մի ակնթարթում խմբւում էին մեծ քանակութեամբ շերեփուկներ և նորից ցըւում ու իրենց արագ շարժումներով գւարճացնում աղջկան:

Տիգրանը ժպիտը դէմքին հետեւում էր քըրովը: Յանկարծ նկատեց մի շերեփուկ երկու ոտքերով: Ծաղկամանները շտապ ցած դրեց ու թէը վեր քաշելով, ձեռքը կոխեց ջրի մէջ և հանեց շերեփուկին:

—Տես, Սիլվիկ, ահա սրա ետի ոտքերը արդէն բուսել են, յետոյ կը բուսնեն առջեկները, յետոյ պոչը կը կարճանայ...

—Ցիշում եմ, յիշում,—վրա բերեց Սիլվիկը, —յետոյ վրայի կաշին կը ճաքի, կը թափւի ու կը ստացւի մի անձունի գորտուկ: Այս ջրի միշինը աւելի լաւերն են...

Զէր վերջացըել խօսքը, որ Տիգրանը ձեռքի շերեփուկը ջուրը ձգելով, վրա ընկաւ մի ինչ որ ցատկուան իրի:



Գորտեր (կանաչ) եւ շերեփուկներ  
—Սիլվիկ, Սիլվիկ, տես, դէ, միթէ սա անձունի է, —բարձրացնելով իրը գետնից ու շփե-

լով նրան ասաց Տիգրանը:—Ի՞նչ հարթ է վրայի կաշին: Արէ, շնորհաւորիր սրա չորս թաթիկները, պոչից ազատւելը. սա արդէն չափահաս է. իրաւունք է ստացել թէ ցամաքի վրա, թէ ջրի մէջ ճամփորդելու: Իսկ քո սիրելիներդ ջրի դուրս գալ չեն կարող՝ մի պոչ և մի գլուխ ունեն, ի՞նչպէս դուրս գան և որ դուրս գան է՝ ցամաքի վրա իսկոյն կը մեռնեն:

—Ի՞նչո՞ւ, — շրթունքը ուղցնելով հարցրեց Սիլվիկը:

—Որովհետեւ շերեփուկները ձկների նման խորիկներով \*) են չնչում, իսկ գորաերը մեզ նըման թոքերով \*\*): Բայց սա քո ինելքի բանը չէ՝ դու շատ փոքր ես այսպիսի բաներ հասկանալու համար:

Սիլվիկը զարմացած լուսմ էր եղրօրը, յետոյ վեր կացաւ և կարծելով թէ մօտիկից կարելի է տեսնել գորտի թոքերը, ուզեց վերցնել

\*) Խորիկը ձկան, շերեփուկի և այլ՝ բոլոր ժամանակ ջրի մէջ ապրող կենդանիների շնչառութեան գործարանն է: Այս գործարանով կենդանին ծծում է ջրի միջից օդը: Յամաքի վրա ջրային կենդանին մեռնում է, որովհետեւ խորիկը չոր օդից չորանում է:

\*\*) Թոքերը ցամաքի վրա ապրող կենդանիների շնչառութեան գործարանն են: Գորտը, կէտը, օձը, կրիան և այլ կենդանիները թոքեր ունեն, այդ պատճառով ջրի տակ երկար չեն կարող մնալ, նրանք գուրս են հանում գլուխները օդ շնչելու և ապա նորից խորասուզւում ջրի մէջ:

եղրօր ձեռքից գորտուկին, բայց սառնութիւնից ձեռքից բաց թողեց: Գորտուկն ընկաւ և պահւեց քարերի մէջ:

—Վատն է, վատն է քո գորտուկը, իմ շերեփուկներս աւելի լաւ են. ես նրանց եմ սիրում,—ասաց աղջիկը և անբաւականութեամբ դարձաւ տեղը:

—Բայց մի քանի շաբաթից յետոյ ախարքու շերեփուկները չեն լինի այլ ևս, բոլորը գորտեր կը դառնան,—ասաց Տիգրանը կամացուկ, որ քրոջը չը վշտացնի:

—Էլ երբէք այսպիսիները չեն լինի:

—Ոչ, միւս գարնանը միայն կը լինին շերեփուկները. չէ որ գորտերը իրենց ձւաները տարէնը մի անգամ, այն էլ գարնան են ածում, իսկ քո սիրելի շերեփուկները, ես ասել եմ քեզ, որ ձւից նոր դուրս եկած գորտեր են:

—Հա, միւս գարնանը ես մի քիչ էլ մեծ կը լինեմ և կը կարողանամ սրանցից ամենասիրուններին նկարել. յետոյ պատից կախ կը տամ և ամբողջ տարին կը տեսնեմ շերեփուկներ:

—Գիտես, Սիլվիկ, քո սիրելի շերեփուկներիդ էլի ով է շատ սիրում, —չէր դադարում եղբայրը, —լորդուկ օձը. Նա միանգամից հարիւր հատ կարող է կուլ տալ:

—Հապա քո սիրելի գորտերի՞դ:

—Օ՛, լորտուկը նրանց աւելի է սիրում: Բայց իմ սիրելիներս խելօք կենդանիներ են.

իրենց անկող սուր աչքերով իսկոյն նկատում են թշնամուն և այնպիսի ճարպիկութեամբ են պահում, որ նրանցից հազիւ մէկն է լորդուկի ճանկը ընկնում: Թէև լորտուկին մէկն էլ բաւական է, մանաւանդ եթէ մեծերից է: Շատ մեծ գոր-



կորտուկն (յշք) և գորտուկները  
տին՝ օձը ժամերով տահջում է մինչև կուլ է  
տալիս:

— Իսկ քո գորտերդ ի՞նչ են ուսում, Տիգրան, տես՝ իմ շերեփուկներս ինչպէս լաւ են հացի փշանքներն ուսում:

— Է՞ն, աշխարհս լիքը միջաւաներ՝ թիթեռ,  
ճանձ...

— Թիթեռ, ճանձ, ի՞նչպէս չէ, նրանք բոլորը  
թոշողներ, իսկ քո գորտերը հաստ-հաստ, ծանր-  
ծանը պառաւի նման, ի՞նչպէս են հասնում նը-  
րանց ետևից:

— Հա, ճիշտ ես ասում, բայց ես քեզ ա-  
սացի, որ իմ գորտերս շատ խելօք կենդանիներ  
են, համ էլ մի ուրիշ յարմարութիւն էլ ունեն:  
Հապա լեզուդ հանի՛ր, Սիլվիկ:

Սիլվիկը անգիտակցարար հանեց լեզուն:  
— Դու լեզւիդ ո՞ր ծայրն ես հանել:  
— Առջեինը, չես տեսնում:  
— Իսկ ետևի՞նը:  
— Ետևինը չեմ կարող. կպած է:  
— Իսկ գորտի լեզւի առջեկի ծայրն է կպած,  
ետևինը ազատ:

— Է՞ն, այդ հօ նրա ամբողջ լեզուն դուրս  
կընկնի, որ հանել ուզենայ:

— Նա էլ հենց այդ է ուզում էլի: Կամաց  
մօտենում է մի տեղ նստած ճանձի ու յանկարծ  
թաց լեզուն դուրս ձգում ու ծածկում ճանձին:  
Ճանձը կպչում է նրա թաց լեզւին: Գորտը կըր-  
կին ներս է տանում լեզուն բերանը ու կպած  
ճանձին անուշ անում: — Բոէ-կէ կէ-կէ, բոէ-կէ-  
կէ, կէ... կանչում է նա յետոյ ուրախութիւ-  
նից ու մի քանի անգամ ջրի մէջ գլուխկոնծի  
տալիս:

Այդ ասելով Տիգրանը այնպէս ոգեսրւեց,  
որ ձեռքերը գետնին յենելով ու ոտքերը բար-

ձրացնելով ինքն էլ մի քանի պտոյտներ արտւ լճակի ափին:

—Վայ ուշանում ենք, —յիշեց յանկարծ Տիգրանը ու վերցնելով ծաղկամանները վազեց դէպի գետը.


—Ղորթ, ղորթ, բռէ-կէ, կէ, կէ, —կանչեց Միլվիկը ու գորտի պէս երկու ոտքով թոչկոտալով բարձրացրեց կողովը, միջի փշրանքը դատարկեց լճակի մէջ, յետոյ մի ժպտուն հայեացք նետեց շերեփուկների վրա և կրկին գորտի նման ցատկոտալով ու բռէ-կէ-կէ, կէ, բռէ-կէ-կէ-կէ, ղորթ, ղորթ կանչելով հասաւ եղբօրը:

Մի փոքր դէս ու դէն նայելով Տիգրանը հասկացաւ, որ կամուրջը ջուրը տարել է: Նըստեց գետնին, հանեց կօշիկները և զրեց ծաղկամանների մէջ: Յետոյ վեր կացաւ ու մէջքը կոացնելով դէմ արաւ քրոջը: Միլվիկը շատ էր սիրում, երբ եղբայրը նրան շալակում էր: Իսկոյն փաթաթեց թևերը եղբօր վղովը ու ոտքերն էլ մէջքովը: Տիգրանը պինդ բռնեց նրա ոտքերից ու համարձակ մտաւ ջուրը: Ջուրը մինչև ծընկներն էր համառում, բայց Տիգրանը վախկոտներից չէր: Մի բոպէում հասաւ միւս ափը և առանց ցած դնելու քրոջը, ուզդակի ցանկապատի մի ջարդւած տեղով դրեց նրան այգու մէջ:

Լուռ էր այգին: Միլվիկը նայեց չորս կողմը: Ուզիկների խոտերի միջից մանուշակների փունջ-փունջ կապոյտ աչիկները նայում էին աղջկան:

Նա չէր սիսալւել՝ այնքան մանուշակ կար շուրջը, որ գետինը կապտին էր տալիս:

—Սիրունիկներս, —բացականչեց աղջկը ու շտապ-շտապ սկսեց քաղել ծաղիկները և լցնել կողովի մէջ: Բայց, յանկարծ, ոտքը սլքւեց խո-



Երկու անգամ աղջկան ավելի աղջկական ովկիզոյն պիլամիդ —ապրում է Խաղաղ եւ Հնդկական ովկիանուներում, անրոյն օձերից է:

աի վրա և երեսի վրա վայր ընկաւ. իսկ մանուկները կրկին սփուեցին գետնին:

Միլվիկը ձայն չը հանեց. մի բոպէ մնաց այդպէս, կարծելով թէ ցաւից չի կարողանայ բարձրանալ, բայց տեսաւ, որ ոչ մի տեղը չի ցաւում, թէև ծնկները խրւած էին չոր հողի մէջ,

իսկ դէմքը թաղւել էր կանաչ խոտի և մանուշակների մէջ:

—ի՞նչ լաւ է, ի՞նչ անուշ հոտ է բուրում այստեղից, —ասաց ինքն իրեն աղջիկը և այնպէս գետնին փուած սկսեց աղահութեամբ հոտ քաշել մանուշակներից: Յետոյ բարձրացրեց գլուխը, որ վեր կենայ ու աչքերը լայն բացած, սարսափահար մնաց այդ գրութեան մէջ. նրա դիմացը, չորս քայլ հեռու կանաչ խոտի մէջ մի չոր հաստաբուն թթենի էր ընկած. այդ թթենու տակից, ամենաարեստ տեղում երկու նախշուն ժապաւէններ էին ձգւած իրար կողքի և փայլվին էին տալիս արեի շողքից:

Սիլվիկը հասկացաւ, որ դրանք երկու օձ են՝ գլուխները ծառի բնի տակ խրած, մարմինները արեին դէմ տւած, ու վախից չը կարողացաւ ձայն ծպտուն հանել:

Մինչ այդ Տիգրանը կօշիկները հազաւ և իր բեռը ձեռքն առնելով գնաց քրոջ ետևից:

Այն է մօտենալու վրա էր, որ մէկ էլ աչքովն ընկան թթենու տակի օձերը և քոյրը՝ գետնին փուած:

Նա դէն նետեց իսկոյն ձեռքի եղածը, զըրկեց քրոջը և կայծակի արագութեամբ դուրս փախցրեց այգուց, ընկաւ կօշիկներով ջուրը ու շնչառառ հասցրեց միւս ափը: էլ չէր կարող տանել՝ բեռը ծանը էր: Տիգրանը ցած իջեցրեց քրոջը ու աչքը չը հեռացնելով այգու ցանկա-

պատից, կարծելով թէ օձերը իրենց հետևում են, սկսեց բոլոր ուժով կանչել այգեպանին:

—Մօսի, հէյ, Մօսի, Մօսի... օձը, օձը, հասիր, օձը, հէյ Մօսի...

Դեռ նոր էր ձայն հանել, որ այգու խորքից լսւեց.

—Գալիս եմ, վախէք ոչ, գալիս եմ...

Մօսինի ձայնի վրա Տիգրանի սիրտը պլնդեց, բայց Սիլվիկի աչքերը լցւել էին արցունքներով և նա պինդ կպել էր Տիգրանին ու ամբողջ մարմնով գողում էր վախից:


Արդէն երկում էր վազների միջով արագ մօտեցող այգեպանի գլուխը: Երեխաները աչքները չէին հեռացնում նրա մորթէ փափախից:

Մօսին վազէվազ հասաւ ցանկապատին, ուսի բահը ուժեղ հարւածով ցցեց վշի մէջ ու յենելով վրան մի թոփչք արաւ ցանկապատի վրայով ու կանգնեց գետի միւս ափին:

—Ո՞րտեղ ա օձը, ո՞րտեղ, վախէք ոչ, ձեղ մատաղ, ես նրա աչքը սհաթիս հանեմ:

—Թթենու տակին, Մօսի բիծի, էն չոր թթենու տակին,—միաբերան գոչեցին երեխաները, ձեռքները դէպի այգին մեկնելով:

Մօսին բահը ուսին, վազելով գնաց օձերին սպանելու, բայց օձերը, մարդկանց ձայներից թէ կուշտ տաքանալուց յետոյ, մտել էին իրենց բունը, չէին երկում.



Սովորական քունաւոր իժ, օձ օձեր, իմեր. Զմեռը սիրում  
էն խում-խումբ ապրել:

Այգեպանը նորից վերադարձաւ ափ, քա-  
րից քար թռչելով անցաւ գետը ու գրկելով Սիլ-  
վիկին սկսեց նրան փաղաքշել.

—Վախիլ՝ մի, բալա ջան, օձ չէր լինի, լոկ \*)  
կը լինէր. Նա հօ չի կծում, կծի էլ բան չը կայ:

—Ոչ, Մօսի բիծի, —վրա բերեց Տիգրանը  
խորհրդաւոր և վախից դողողացող ձայնով.—  
մէկը լոկ էր, բայց միւսը թռնաւոր օձ էր, իժ  
էր: Ես ինքս տեսայ մէջքի գլխից մինչև պոչի  
ծայրը գնացող սև կոտրտած գիծը, վիզը բարակ  
էր, պոչը երկար և սուր, գլուխն էլ տափակ կը  
լինէր էլի: Մեր վարժապետի պատմութիւնից  
յետոյ ես լաւ եմ ճանաչում իմերի բոլոր նշան-  
ները: Լոկերի մէջքին չէ որ սև գիծ չի լինում,  
համ էլ վիզ չունին՝ գլուխը ուղղակի կպած է  
հաստ մարմնին:

Մինչ այդ այգեպանը նկատել էր, որ Տիգ-  
րանի կօշիկները լիքը ջուր են: Վախեցաւ երե-  
խան մրսի. Սիլվիկին գրկած անցաւ գետը ու  
Տիգրանին էլ կանչելով ասաց.

—Գնանք չարդախի տակին մի քիչ նստենք,  
մինչև ոտնամաններդ ու գուլպաներդ չորանան:  
Օձերից հիմի վաս չը կայ. դեռ սառած են,  
ուշքի չեն եկել. Ես նրանց հինգ մատիս պէս եմ  
ճանաչում:

Սիլվիկը այգեպանի ուժեղ ձեռքերի մէջ ի-  
րեն ապահով զգաց ու վախն էլ անցաւ: Յիշե-

\*) Կօրտուկ:



լով օձերի կաշւի փայլը արեի տակին՝ նա հիացած բացականչեց.

—Այնքան նախշուն էին, Մօսի բիձի, փորը սպիտակ, մեջքը կանաչ կարմիր, դեղին դեղին կէտերով և մեծ մեծ, այ այսքան,—ցոյց տւեց նա օձերի մեծութիւնը ձեռքերը ետ տանելով:

—Ե՞ն, դրանք մեծ են որ, Սիլվիկ, —ասաց Տիգրանը հասնելով նրանց. —մեր երկրում մեծ օձեր չըկան, ասում է մեր վարժապետը. ամենից շատը մօտ երկու արշին երկարութիւն է լինում ու




Սովորական լորտուկ (սիրում և մտնել ջուրը) մի չորս մատ էլ հաստութիւն. Մեծը այ տաք երկրների օձերն են. Մեր օձերը տաք երկրի օձերի ճուտերի չափ էլ չըկան: Գիտես՝ Հնդկաստանի շառաչող և ակնոցաւոր օձերը ի՞նչ են, մանաւանդ Ամերիկայի բօան և անակոնդան.

չորս սաժէն երկարութիւն ունեն սրանք ու մի մարդու էլ հաստութիւն: Անակոնդան որ ուզում է յարձակվի իր որսի վրա, պոչը փաթաթում է երկու երեք տակ մի հաստաբուն ծառի և երկանդանի լեզուն հանած, վշշացնելով մօտ երեք սաժէն հեռու գնացող կենդանու վրա նետւում. ով գիտէ ինչ է՝ նապաստակ, այծիկ, եղջերու և այլ խոշոր կենդանի. մի քանի տակ էլ սրանց մարմնի շուրջը փաթաթւում, պինդ հուպ տալիս խեղդում, ոսկորները փշում ու լափում: Իսկական վիշապ է էլի. հեքեաթների վիշապներին յիշում ես: Իսկ մեր օձերի կերած ամենամեծ կենդանիներն են՝ գորտերը, մկները, մողէսները, ձկները կամ թէ չէ թռչունների ճուտեր, ճուաններ, թէ չէ սովորաբար որդերով և միջատներով են կերակրում:

—Դէ էլ ինչու վախեցար մեր օձերից, գուր տեղն էլ ոտներդ թրջեցիր, —քմծիծաղ տալով ասաց այգեպանը:

—Հա, լոկ լինէր՝ ես չէի վախենալ, բայց մէկը թունաւոր էր, կարող էր կծել: Նա չը լինէր, լոկից ես իսկի չէի վախենալ: Ես գիտեմ, որ լոկերը անվաս կենդանիներ են: Նրանք նոյն իսկ տներումն էլ են ապրում և դեռ ոչ մի դէպք չէ եղել, որ մարդու վնասեն: Այ անցեալ տարի, յիշում ես, Սիլվիկ, մեր դրացու տղայ գիտ Գէորգը ի՞նչ արաւ: Ճանաչում ես, Մօսի բիձի, Գէորգին: Ի՞նչ սրտոտն է, պահ, պահ,

Իսկի չի վախենում օձերից, լաւ էլ ճանաչում է նրանց տեսակները։ Մի օր Զատկիցը մօտիկ, այգուց վերադառնալիս մի մեծ լոկ է պատահում. վերցնում է սրան ծոցը դնում։ Բազարի միջով անցնելիս սրան պատահում է իրենց հարեանի աղջիկ Սօֆիկը, որը կուժը ուսին ջուր էր բերում տուն։ Կատակով էր թէ սրաումը




### Շառաշող օձ

մուռ (վրէժ) ունէր պահած, Գէորգը ետից կամաց մօտեցաւ Սօֆիկին ու ծոցի օձը փաթաթեց սրա վզովը։ Խեղճ աղջիկը օձի գլուխը տեսաւ թէ չէ, սոսկալի ճիչ արձակեց ու ուշաթափ ընկաւ գետին, կուժն էլ կոտրւեց։ Բայց լոկը առանց մի վաս տալու հանգիստ վայր սողաց և մտաւ քարերի մէջ։

Հասել էին թթենուն։ Երեխաները լուս ահով չորս կողմն էին նայում։

Այգեպանը կռացաւ ու բարձրացնելով ճանապարհի վրա ցրւած ծաղկամաններն ու կռովով, տւեց Տիգրանին տանելու։



### Սովորական բօա

Բաւականին հեռանալով վտանգաւոր թթենուց ու ապահով զգալով իրեն, Տիգրանը ընդհատեց լուսթիւնը։

—Մօսի բիձի, —դարձաւ նա այգեպանին, —որ մեր օձերին հինգ մատներիդ նման գիտես,

կարող ես ասել թէ մեզ մօտ ո՞ր ամսից են ձմռան քնից արթնանում օձերը և մի քանի օր յետոյ ի՞նչ է լինում նրանց,—հարցրեց խորամանկ ժպիտով Տիգրանը:

—Պահ, էտ էլ չ'իմանամ, սաղ գարունքն և ամառն օձերի մէջ եմ անցկացնում, դիմիս մազերի համրանքով օձ կը լինեմ սպանած,—պատասխանեց այգեպան Մօսին:—Էն է սաղ աշունքը, ձմեռը մենակ կամ տասնեակներով իրար փաթաթւած, սառած, փէտացած իրանց բներումը վէր թափած են: Քու բիձու տղայ, հանգուցեալ վարժապետ պ. Գրիգորը, Աստւած հոգին լուսաւորի, ձմեռները մեզ շատ օգտակար բաներ էր պատմում: Նրանից լսել եմ, որ օձերի, գորտերի, խլէզների (մողէսների), էլ ինչ գիտեմ, բոլոր սառը կենդանիների արիւնը թէն մերի նման կարմիր է, բայց մերի նման տաք չի, սառն է: Նրանց մարմինը կամ գետնի տաքութիւնից, կամ արևից պէտք է տաքանայ: Դրա համար էլ ցուրտ վախտը նրանք սառած փէտացած են: Մարտի վերջումը կամ ապրիլի սկզբներին եղանակները լաւանում են թէ չէ, օձերը բնի մէջ ժաժ են գալիս, որովհետեւ գետնի տաքութիւնից նրանք էլ են մի քիչ տաքանում: Ու թէ դուրս էլ արև կայ, դուրս են գալիս բնից ու մէջքը արեին դէմ տալիս, որ աւելի լաւ տաքանան, արիւնը շարժւի մարմնի մէջ, որ կարողանան կերակուր որսան, թէ չէ

սաղ ձմեռը խեղճերը առանց կերակուր են լինում՝ վրաների իւղը հալւում է սովից: Օձերի ամենասիրած բանը արեի տակին քնելն է: Մի քանի օր էլ լաւ տաքանալուց յետոյ սկսում են խորիսահան լինել: Այ, հրէս փափախիս միջին մինը պահել եմ,—ասաց Մօսին ու մեծ մորթէ գլակի միջից մի օձի թափանցիկ շապիկ հանեց:—Ասում են սրանից ունեցողը էլ օձից չի վախի, համ էլ գլուխը չի ցաւի: Ես նոր եմ գաել հէնց էն թթենու մօտերքը: Էնտեղ անգամ օձի բուն պիտի լինի, պէտք է ուշք դարձնեմ, սպանեմ, թէ չէ կանանց, երեխաներին վնաս կըտայ:

Տիգրանը վերցրեց օձի խորիս Մօսինի ձեռքից, լաւ զննեց ու տւեց Սիլվիկին:

—Վայ, կարծես շապիկ լինի,—ասաց Սիլվիկը:—Օձը ձեռքեր չունի, ի՞նչպէս է էսպէս շապիկի նման հանել: Տես, Տիգրան, ամբողջ է շապիկ և միայն գլխի մօտ կայ մի ձեղք: Երեխ էս ձեղքից է ինքը դուրս եկել:

—Այ թէ ինչպէս,—պատասխանեց Մօսին:—Օձի կաշին երկու տակ է մէկը տակից իսկականն է, միւսը վերեկից՝ խորիս: Էտ խսկական կաշին հաստ է ու ձկան թեփերի նման ծալծալ կաշին հաստ է ու ձկան թեփերի նման ծալծալ իրար վրա եկած: Տեսէք խորիսի վրա երկում են էտ թեփերի տեղերը: Ճիշտ է, օձը ձեռքեր չունի, բայց իմաստուն է: Հենց որ խորիս իսկանի, բայց իմաստուն է, չենց որ խորիս իսկան կաշից բաժանւում է, որ զգում են թէ էլ


ոչ մի տեղը կպած չի, մտնում են քարերի,  
փէտերի արանքները և այնքան են քսւում, որ  
խորխը հանուում է վրիցը։ Շատը չի կարողանում  
էսպէս սաղ հանել, կտոր կտոր է հանում, բայց  
տարին մի քանի անգամ անպատճառ խորխահան  
է լինում, —վերջացրեց խօսքը Մօսին ու օձի  
խորխը կըկին պահելով փափախի մէջ՝ զրեց զըւ-  
խին։

Նըանք արդէն չարդախի տակին էին։

Մօսին Սիլվիկին գրկից ցած դրեց, բայց  
Սիլվիկի սիրաց նորից սկսեց դողալ, նա ձեռքը  
մեկնեց ու պինդ բռնեց Մօսինի չուխի փեշիցը։

Մօսին տեսնելով, որ երեխան վախենում  
է, նստեց գեանին ու Սիլվիկին ծնկանը նստա-  
ցնելով՝ դարձաւ Տիգրանին։

—Տիգրան ջան, ոտնամաններդ ու գուլպա-  
ներդ հանիր, փոփր չորանան, շորերդ քամիր՝ չը  
մըսես, որդի, հէրդ ու մէրդ քեզ վրա շատ ամագ  
են արել, մեղք են. համ էլ ուսումնարանից ետ չը  
մնաս. էտէ աչքաբաց տղայ ես մեր հանգու-  
ցեալ վարժապետի նման։ Սովորի, որդի, սովորի,  
նրա նման մարդ դառի։ Ես գիտեմ քո հէրն ու  
մէրը քեզ չեն թողնի, կուղարկեն ուսումդ շա-  
րունակելու։ Ո՞վ գիտի. ասում են հայրենիքի  
հողն ու ջուրը քաշում են մարդու. որ ուսումդ  
վերջացնես, գուցէ հանգուցեալի նման գաս քո  
հայրենիքդ ու մեզ պէս մութ ըռաշպարին (հո-  
ղագործին) մի քիչ լուսաւորես։



Անակոնդա օձ

Այս ասելով Մօսին հանեց պաճիճի միջից  
երկար չի բռւխը, գոտուց էլ ետ արաւ թամբա-  
քուի պարկը ու պատրաստւեց ծխելու:

Տիգրանը, որի գլխում նոր հարցեր էին ծա-  
գել օձերի մասին, ցած դնելով ծաղկամանները  
շտապեց կատարել Մօսինի ասածները, որ կա-  
րողանայ էլի խօսացնել նրան:

Սիլվիկը, նստած Մօսինի ծնկանը, աշխա-  
տում էր յիշել տեսած օձերի գոյները, որ կա-  
րողանայ տանը նկարել:

Կէս օրւան արդէն մօտ էր: Արել ողողել  
էր ամբողջ այգին ոսկեփայլ ճառագայթներով:  
Վազների տակի փիլրուն հողը ու ուղիների կա-  
նաչ խոտը ծաղիկներով կէծացել էին արեի տա-  
քութիւնից և անուշ հոտով լցրել այգին:

Վերջացնելով գործը, Տիգրանը վագէվազ  
մօտեցաւ նստողներին ու մեկնեց կանաչ  
խոտի մէջ:

Մօսին չի բռւխը բերանին ուշադրութեամբ  
դիտում էր չարդախի առաջի հսկայ կեռասենին:

Երեխանները այդ տեսնելով, հարցրին թէ  
ինչու է նա այդպէս զննում ծառը, հօ չի ուզում  
գուշակել թէ այդ տարի ծառը քանի կեռաս է  
տալու:

— Զէ,—պատասխանեց այգեպանը,— միտս  
եկաւ թէ ինչպէս մի տարի էս ծառի վրա մի  
հարամի օձ ուզում էր ահագին կաչաղակին  
կուլ տայ: Որ չը սպանէինք էն անտէրին, խեղճ

դուշին էլ, ճուտերին էլ կուտէր, բունը կաւե-  
րէր:

— Ի՞նչպէս եղաւ, ի՞նչպէս եղաւ, Մօսի բի-  
ճի, պատմի՛ր, մենք էլ լսենք, խնդրեցին երե-  
խանները:

Մօսին շատ խնդրել չը տւեց, չի բռւխը հա-  
նեց, ծուխը քթածակերով դուրս թողեց ու սկսեց՝

— «Մի տարի, շատ ջահէլ վախտս, մայիսի վեր-  
ջերին էր, շոգերը սկսել էին: Էտ տարի էս  
գիլասին խիստ շատ էր բռնել ու հասնելով կար-  
մրել, փունջ փունջ սիրուն կախւել կանաչ ճիւ-  
ղերից: Տանեցիք, մեծ ու փոքր եկել էին ներ-  
քեի ճիւղերը քաղել, վերեկինը չէին կարողացել՝  
շատ բարձր էր: Ես էլ մի օր քթոցը վեր կալայ,  
եկայ թէ քաղեմ: Հլա քթոցը գետնին դրի ու  
միամիտնստեցի թէ ոտներս հանեմ: Մէկ էլ յան-  
կարծ կաչաղակների ճւճւոցը չորս կողմու բռնեց:  
Գլուխս վեր քաշեմ, ի՞նչ տեսնեմ: Մի հարամի  
օձ, թունաւորներիցը, փաթաթւած ծառին, հա-  
րաքաթ է անում, որ հասնի վրայի կաչաղակի  
բնին, ճուտերին ուտի: Կաչաղակներն էլ նրան  
տեսնելով հարահրոցն են ընկել, ճուտերը բնի  
մէջ, մէրն ու հէրն էլ չորս կողմը պտաւելով:  
Մեղքս եկաւ խեղճ թռչունները: Ասի՝ ինչ էլ  
որ լինի, ես սրանց պիտի ազատեմ: Վազան տա-  
կիցը ձեռաց մի սարի (նեցուկ) հանեցի ու ծա-  
ռի ճղներովը սկսեցի բարձրանալ էտպէս ճիւղէ  
ճիւղ անցնելով հլա էնտեղը վրա հասայ, որ սա

թոչունների պատւելու ժամանակ մօրը ըռխել էր ու բերանը անձոռնի բացած հայ էր անում, թէ թոչունին սաղ սաղ կուլ տայ \*): Որ սարիի սուր ծայրով վզակոթին չը բգեցի, ծայրը անցաւ ու խրւեց ծառի մէջ: Օձը ծառին մեխւեց թէ չէ, թոչունին բաց թողեց ու սկսեց պոչովը էնպէս խփել ծառին, էնպէս ժաժ տալ, որ քիչ էր մնում, թէ ինձ ճնիցը վէր գցի: Տեսա՝ մենակ չեմ յաղթում, հարայ տւի: Բաղերիցը հարևանները եկան ու սրա մէջքին ու գլխին էնքան տվին, որ սաղ տափակացրին: Վէր եկայ ու ջամդաքը (դիակը) գցեցի սարհատի (սահմանի) փշին: Մէկ էլ շուռ եկայ, որ ուրուրը կըտցեց ու փախցրեց:

—Վայ, թիւն, օձին էլ կուտե՞ն, —բացականչեց Սիլվիկը զգւելով:

—Ի՞նչի չէ, մատաղ, մենակ հօ ուրուրը չի ուտում օձին: Ագուաւը, արծիւը, արագիլը, աղւէսը, կատուն, խոզը, մանաւանդ ողնին: Վայ, մազալու է ողնու օձ բռնելլ:

Ողնին կամաց մօտենում է օձին (օձն էլ հօ ականջների ծակեր չունի գլխին, կըլի որ լաւ լսելիս չը լինի) ու պոչը բռնելով կծկում: Օձը բարկացած սկսում է մարմնով տուր հա կը տառ՝

\* ) Կերակուր կուլ տալիս օձերը թունաւոր ատամները ետ են գցում, որ կերակուրին չը կպչի և չը կոտրի, թէև կոտրւելու դէպքում նորերն են երկարանում:


խփել ու խփել ողնուն: Բայց ողնուն ի՞նչ. օձը ինքն է ծակծկում նրա փշերից ու էնքան ծակծկում է, որ սատկում է: Էսպէս սպանելուց յետոյ նոր ողնին սկսում է օձին անուշ անել:

—Որ սրանք էլ, մարդիկ էլ չը կոտորեն օձերին, հօ աշխարհս կը լցւի, էնքան կը շատանան նրանք: Գիտէք ամեն մի օձը քանի ձու է ածում տարէնը. 30, 40, 60-ը, գեռ էլ աւել: Մայիսին, յունիսին մէկ էլ տեսար հողի քռուճների (կոյտերի) քարերի, աղբի կիտուկների տակից դուրս թափւեցին գետնի ճիճուների նման օձերի ճուտերը: Զւաներն էլ փափուկ-փափուկ, աղունակի ձւի չափ են: Էս անտէրներն էլ դուրս են գալիս ձւից թէ չէ, խորխանան են լինում մօր նման ու սկսում իրանց համար կերակուր որսալ:

—Նրանք էլ են գորտեր, թոչուններ ուտում, —հարցըրեց Սիլվիկը:

—Ոչ, նրանք փոքր են, քո ճկոյթ մատիդ հաստութեան. գորտեր ի՞նչպէս կարող են ուտել, —պատասխանեց Տեգրանը: —Նրանք միշաներով, որդերով են կերակրուում մինչև մեծանալը: Իսկի մեծ մեծ օձերը չեն կարողանում գորտերին, թոչուններին աղատ կուլ տալ: Եթէ օձերի բերանը չը լայնանար, նրանք չէին կարողանայ իրանց բերանից մեծ որս բռնել: Բայց օձի բերանի ոսկորները այնպէս շարժուն են, որ իրարից հեռանալով երկու երեք անգամ աւելի

են մեծացնում օձի բերանը։ Մանաւանդ էս ներքելի ծնողի ոսկորները ուղղակի մէջտեղից կէս են լինում։ Էնպէս էլ ագահ են անպիտանները կերակուր ուտելու ժամանակ. շատ են ու-



Հիերողիթ պիտի օձը (Աֆրիկա) մի մեծ բռչուն է կուտալիս։

առւմ, բայց շատ երկար՝ շարաթներով, ամիսներով կարող են բան չուտել։ Այ ամբողջ աշունը և ձմեռը, չորս հինգ ամիս, մինչեւ սառած

բների մէջ են, բայ չեն ուտում, ասում է մեր վարժապետը։

— Հասլա գորտերը, մողէսները ի՞նչ են ուտում ձմեռը. չէ՞ որ ձմեռը միջամներ չը կան։

— Գորտերը, մողէսները օձերի նման նոյնպէս սառչում են ձմեռը և ոչինչ չեն ուտում մինչեւ բներից գուրս գալը։

Այգեպանը հետը չիբուխն էր ծխում, հետը ուշադրութեամբ երեխայի պատմածները լսում։

— Մօսի բիձի, այնքան օձեր ես սպանել, ի՞նչպէս է որ մէկն ու մէկն էլ բեզ չի կծել։ Դարձաւ այգեպանին կրկին Տիգրանը։

— Ի՞նչպէս չի կծել, բա սա ի՞նչ է, — պատասխանեց Մօսին. Նա չիբուխը գետնին զնելով, սկսեց ետ տալ պաճիճի կապը ու բաց անելով աջ սրունգը՝ ցոյց տւեց ծնկան տակի խաչաձև սպին։

— Պատմիր, պատմիր, Մօսի բիձի, — խընդրեցին կրկին երեխաները, հետաքրքրութիւնից վառւող աշքերով։

— Մի շող օր, — սկսեց իր պատմութիւնը Մօսին, — մեր վերի բաղի խոտը հնձելիս գերանդիս կպել էր մի մեծ սև օձի։ Դիպչելն ու զլուկը վեր քաշելը, ոտիցս կպչելը մէկ եղաւ։ Դեռ ոտիցս կախ էլած էր, որ ես էլ գերանդիս սուր ծէրովը նրա գլուխը թոցը։ Բայց էն անտէրը էնպէս էր կատաղած, որ էն թոցը գլխին որ մի բան մօտեցնէիր, էլի մի քանի անգամ կը

կծէր։ Մի սհաթ էլ մարմինը մի տեղ էր ոլոր-  
ւում, գլուխը մի տեղ չէր դինջանում։ Էլի ջա-  
հել վախտս էր, խելքս բան չէր կտրում։ Տէրը  
բարի տայ մեր կողքի բաղի տիրոջը։ Որ բղա-  
ւեցի, կողքիս դուրս եկաւ տղի հետ միասին։  
Էս մարդը շատ փորձւածն էր։ Էն սհաթին ձե-  
ռի աղուխով ոտս պինդ կապեց ծնկանս վերե-  
ւից, որ եազին (թոյն) ջանովս չը տայ, ու տղին  
թէ՝ «Արթին, բերանումդ թէ վէրք չը կայ,  
վրա ընկի, սրա ոտի արինը ծծի, վեր ածա. կու  
չը տաս՝ վաս կը տայ»։ Յետոյ տեսաւ որ չէ,  
ոտս ուռչում է, հանեց սուր դանակը ու կծած  
տեղը այ այսպէս խաչածն կտրեց։ Սև արինը  
առափ նման զցում էր, ես թուլացած վէր ըն-  
կած էի։ Էտ էլ չօգնեց, ուռուցքը հասաւ ջա-  
նիս։ Սա տղին ուղարկեց գեղամէջ, որ համ մեր  
տանեցոց խաբար անի, համ էլ վռազ մի շուշայ  
արազ բերի ու մինչեւ նրա գալը, ինքը չոր ճա-  
խերից կրակ արաւ, ձեռի դանակը կարմրացրեց  
ու սկսեց կծած տեղը դաղել։ Արազը համնելուն  
պէս էլ սաղ շուշին դատարկել տւաւ թէ՝ դա  
թոյնը ներսից թուլացնում է։

«Մեր տանեցիք որ իմացել են, վազ են  
տւել օձի աղօթք ասողի մօտ։

«Տեսնենք սա եկաւ օձի քարը հետը։ Էտ  
քարը ասում են Հնդկաստանումն են պատրաս-  
տում։ Ինչից, յայտնի չի, բայց մի հրաշք բան  
է։ Էս մարդը քանի քարը կաթի մէջ թրջած դը-


նում էր եարիս, քարը կպչում էր պինդ ու ուռ-  
չելով, ուռչելով մի քանի ժամանակից յետոյ  
ինքը պոկւում։ Մէկ էլ որ զցում էր կաթի մէջ,  
կաթը սաղ կանանչում էր ու քարը էլի պստի-  
կանում։ Ասում էր, որ քարը իսկոյն չը զցենք  
կաթի մէջ, թոյնի թեժութիւնից կը փշրւի։ Էս-  
պէս քարը օձի թոյնը արինից դուրս քաշելով,  
կաթը քարի միջից էնքան կպցրին, որ էլ կաթը  
չէր կանանչում։ Տէրը բարի տայ նրանց, ժա-  
մանակին վրա հասան, թէ չէ էն է հոգով մարմնով  
կորչում էի։ Քու շափ լինէի, Տիգրան ջան, չէի  
դիմանալ, կը մեռնէի։ Երեխաները չեն դիմա-  
նում, մանաւանդ անասունները, սպանում է  
անաւէրի թոյնը, էնքան թեժ է լինում։

— Հապա ասում էիր՝ մենք ինչու վախե-  
ցանք, — վրա բերեց Տիգրանը։

— Զէ, բալա ջան, լսիր, թունաւոր օձերը  
ցերեկը շատ քիչ են դուրս գալիս, որովհետեւ  
ցերեկը նրանց աչքերը լաւ չեն տեսնում. զի-  
շերն են նրանք լաւ տեսնում, այ, ինչպէս կա-  
տուն. գրա համար էլ նրանք ցերեկը դուրս են  
գալիս մենակ արեկի տակին տաքանալու համար։  
Որ ցերեկը նրանց մարդ չը կպչի կամ շատ սո-  
ված չը լինեն, ոչ ոքի վաս չեն տալ նրանք։ Բայց  
զիշերը նրանք դուրս են գալիս յատուկ որս ա-  
նելու համար և ոչ մի բան նրանց աչքից չի  
ծածկւի։ Յերեկը լոկերն են դուրս գալիս։ Դէ  
լոկերն անվաս կենդանիներ են, թէ և չը ճանա-

Հոգները լօկերից էլ են էսպէս վախենում, ինչ-  
պէս օձերից։

—  
—  
—



Օձի բերանը բաց արած.

Օձի բունաւոր առամբ՝ կես  
արած, c, d վերելի ծակը.  
e, f ստորին ծակը.

ըռանգով, ձեռվ, մեծութեամբ 600 տեսակ օձ  
լինի աշխարհիս երեսին, համա բոլորին էլ եր-  
կու բաժին պիտի անէք, ասում էր հանգուցեալ  
վարժապետը՝ թունաւորների և անթոյների:  
— Ի՞նչու մէկը թոյն ունի, միւսը չէ, —  
հարցըց Սիլվիկը, որ ուշադրութեամբ լսում էր  
խօսողներին:

—Մենակ թոյն չէ, այլ թունաւոր աստիճան

ներ էլ, —պատասխանեց Տիգրանը, որ պատմելու  
համար գլուխ էր պատռում: —Գիտես, Սիլվիկ, օ-  
ձերի բերանը լիքը կէռ, կէռ, սուր սուր փոքրիկ  
ատամներ են: Էտ ատամները միայն ծնոտների  
վրա չեն, ամբողջ բերանը լիքն են ու միմիայն  
որսը բոնելու համար են:

«Բայց թունաւոր օձերը նրանք են, որոնք,  
բացի էտ ատամներից, վերնի ծնոտի վրա էլլ  
երկու երկար ու կեռ թունաւոր ատամներ ու-  
նեն կծելու համար։ Էտ ատամների տակին մի  
մի պարկ թոյն կայ, իսկ ատամների մէջը խո-  
ղովակներ։ Հենց որ օձը կծում է էտ ատամնե-  
րով, իսկոյն խողովակի միջով էտ պարկերից  
4—6 կաթիլ թոյն է կաթում վէրքի մէջ։ Եթէ  
Մօսի բիծի ասածի նման չօգնեն վիրաւորին,  
նա ուռչում է և սարսափելի տանջանքներով  
մեռնում։

— Ճիշտ է, Մօսի բիձի, որ հին մարդիկ առաջ կարծել են թէ օձը լեզւով է կծում, որովհետև նա առաջ իր երկնիւղանի լեզուն է գուրս հանում, — դարձաւ այդեպահնին կրկին Տիգրանը:


— չա, բայց վերջը գլխի ընկան, տեսան որ  
լոկի լեզուն էլ է երկու ճիւղանի, բայց ոչովի  
վնաս չի տալիս: Էն է տեսնես, էն անտէրը ին-  
չու է լեզուն էնպէս շուտ շուտ ներս ու դուրս  
անում:

— Նրա համար, որ տեսնի թէ իրեն ատամի բան է տեսածը։ Ներս է տանում թռչում ու

կրկին հանում, որ ինչ որ ուզում է բռնել՝ շափի:

— Տիգրան, դու պատմում եիր թէ ուրիշ երկրներում օձերին բռնում պար են ածում: Ես թունաւոր օձերին ի՞նչպէս են պար ածում, որ չեն կծում, — հարցը եց կրկին Սիլվիկը:

— Այ թէ ինչպէս: Ամենից շատ ման են



Ակնոցաւոր օձ.

ածում Հնդկաստանի ակնոցաւոր օձերին, որով հետև օձերից շատերը հետաքրքիր չեն, շատերն էլ գերութեան մէջ չեն ապրում: Ակնոցաւոր օձերկար է ապրում, միայն նա շատ թունաւոր է: Բայց բռնողները գիտեն նրանց հետ վարւելու ձեր: Նրանք կամ առաջուց հանում են օձի թունաւոր ատամները, կամ շատ գգոյշ են

վարւում՝ նրանց հետ և ուշադրութեամբ հետեւում: Եթէ օձը ուզում է յարձակւել տիրոջ վրա, նա օձի ծոծրակի վրա մի տեղ գիտի որ հուզ է տալիս թէ չէ, օձը թուլանում, վայր է ընկնում:

— Հապա ի՞նչպէս են հասկացնում օձերին, որ պարեն, — չէր դադարում հարցնելուց Սիլվիկը:

— Ճիշտ, լաւ միտս բերիր: Գիտես, Սիլվիկ, օձերը երաժշտութիւն շատ են սիրում: Երբ օձ որսողը ուզում է օձին բնից հանել, նսակում է բնի մօտ և սրինգ նւազում, սովորաբար տիսուր եղանակներ, որավիճետն օձերը տիսուր եղանակներ են սիրում: Օձը իսկոյն բնից գլուխը զուրս է հանում: Մարզը բանում է և կողովը զցում: Իսկ շրջելիս էլի նոյնն են անում. Երբ ուզում են օձերին կողովից, արկղից կամ ինչի մէջ որ ման են ածում՝ դուրս բերել, կրկին սրինգ կամ մի ուրիշ գործիք են նւազում: Օձը դուրս է դալիս և զանազան շարժումներ անում: Դրան ասում են՝ պար է գալիս:

— Մօսի բիձի. — դարձաւ նորից Տիգրանը այդեպանին, — ասում են օձերը կրակ էլ են շատ սիրում, մանաւանդ գիշերը: Այ, եթէ գիշերս դու կրակ անես, այս այգու բոլոր իժերը քեզ հիւր կը գան և իրենց անկող բաց բաց կարմիր աշքերով այսպէս կը բոլորւին կրակի շուրջը:

— Վայ, ինչ սարսափելի է, — ճշաց Սիլվիկը ու փաթաթւեց այգեպանի վզովը:

— Դէհ, Տիգրան, հերիք խօսես, էտ զգւելի անասունների մասին, վասարից աւել օգուտ չը կայ դրանցից։ Երբ կը լինի, որ կտրւեն աշխարհիցս, — ասաւ Մօսին ու չիբուխը տեղը դնելով՝ վեր կացաւ որ երեխաններին ճանապարհ դնի։

Գուլպաններն ու կօշիկները վաղուց չորացել էին. Տիգրանը սկսեց հագնել։

Սիլվիկը վախից չարդախից չէր հեռանում, այդ պատճառով այգեպանը նրա համար մի քանի փունջ մանուշակ կապեց ու կողովն էլ գլխէ գլուխ թարմ խոտով լցրեց։

Տիգրանն էլ, վերջացնելով հագնելը, ծաղ կամանները վագների տակի ու փիրուն հղով լցրեց ու կռան տակն առնելով երեքով ճանապարհ ընկան դէպի տուն։

Օրն արդէն ճաշ էր դարձել. արել այրու էր։ Այգիները լիքը մարդկանց ձայներ էին բայց դա չէր խանդարում լորտուկներին ու իժերին դուրս գալ իրանց խոնաւ բներից ու մեկնըւել արեի տաք ճառագյթների տակ։ Ով զիտէ՝ այդ ժամին քանի ծառի, քանի թուփի ու խոտի տակ մեկնւած օձեր կային, սակայն երեխանները այս անգամ տուն վերադառնալիս այլիս ոչ մէկի չը հանդիպեցին։



ՀՀ Ազգային գրադարան



NL0392823

76064

# Ր ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

## ԵՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՔԻՆՆԵՐԻ

ոքեամբ «ՀԱՌԿԵՐ» ամսագրի	
Ամիրան Գարեջանիձէ, փոխ. Աթ.	
յեանի	25
Դ. Դերձակի աշակերտը, վօդըւիլ.	10
Ազէսն ու պուտուկը, Ասկի ձկնիկ, Պատկակ— պատկերազարդ հեքիաթներ	10
4. Ս. Գալաչեան — Կապիկներ, բնադիտական զրոյց	10
5. Մարկ Տէն—Մահւան օղակը, պատմւածք, թարգմ. Մ. Թաւաքալեանի	7
6. Կ. Ստանիկովիչ—Պատիկ նաւաստին, պատ- մւածք, թարգմ. Արմակի.	5
7. Մարզար Աևախիսեան—Երեք խրտու, Պղնձէ քաղաքի զրոյցներից	20
8. Է. Սէտոն-Ծոմնանի—Բնիպեգի գայլը, պատ- մւածք հերոս կենդանիների կեանքից, թարգ. Սիմակի	20
9. Լ. Պրայս և Զ. Ֆիլրերտ—Առասպելական հե- րոսներ, թարգմ. Գ. Իփէկեան	20
10. Շուրէն Գարզիէլեան—Ովկիանի թագաւորը. Կէտի մասին, բնագիտական զրոյց	10
11. Մարդակերի ազջիկն ու խորհրդաւոր վար- պետը, Բոտական հէքիաթ. Ռուսերէնից թարգմ. Յովհ. Թումանեան	10
12. Խ. Բ. Բաբայեան—Նոր ընկերունի, Մանկա- կան պիէս, մէկ արարւածով:	10
13. Գ. Մինեան—Ռոկեպողը, արեելեան աւան- դութիւն.	10
14. Փր. Փօկու—Մի ժամւայ նախարարը, պատմւածք թարգմ. Աթ. Խնկոյեանի	15
15. Զիպօն և Պիպօն	25
16. Ռ. Կիսլինգ—Կոտուկօ, պատմւածք թարգմ. Նիկ. Մարգսեան	15
17. Դը-Ամիրչիու—Կարմիր մեխակ, պատմւածք, թարգմ. Բ. Վարդանեան	8
18. Աղարար—Թուխոր մանկական հեքիաթ	12
19. Սօֆիա Գալաչեան—Այգեպանի մօտ	10

Դիմել «Հասկերի» խմբագր. թեան. Տիֆլիսъ,  
редакция „Аскеръ“.  
Զբի յաւելուած «ՀԱՌԿԵՐ» ամսագրի